ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

ՀԱՏՈՐ Լ.

ՊԷՅՐՈՒԹ, 2010

ԱԼԲԱՆԻԱՑԻ ՀԱՑԵՐԸ ԵՒ ՀԱՑ-ԱԼԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

Արեւելեան Եւրոպայի ամենափոքր երկրի՝ Ալբանիայի հետ հայ ժողովուրդն ունեցել է պատահական յարաբերութիւններ, որոնք մինչ օրս ուսումնասիրուած եւ համակարգուած չեն։ Ալբանիայի հայութեան մասին ամենամեծ հրապարակումը կատարել է Ալբանիայի Հայկական Միութեան երբեմնի նախագահ Յարութիւն Եաղհանէճեանը Բէյրութի *Սփիւռք* ամսագրում[1]։ Ամերիկացի գիտնական-լրագրողներ Միրանդա Վիքերսի եւ Ջէյմս Փեթիֆէրի Ալբանիային նուիրուած արժէքաւոր մենագրութեան մէջ անդրադարձ կայ նաեւ տեղի հայերին[2]։

Հայ-ալբանական ամենավաղ առնչութիւնը վերաբերում է ալբանական գրականութեան արշալոյսին։ Ալբանիայի ազգային գրականութեան հիմնադիր Պիետուր Բոգդանին (Pjetër Bogdani, մօտ 1630-1689, յայտնի նաեւ իտալական Պիէտրո Բոգդանօ անունով) որոշ չափով առնչուել է հայ իրականութեանը։ Իտալիայի Պադուա քաղաքում նրա հիմնած Tipografia del Seminario տպարանում հրատարակուել են արեւելեան լեզուներով գրքեր, այդ թւում՝ եբրայերէն, արաբերէն եւ հայերէն։ «Մարգարէների Անէծքը» (Cuneus Prophetarum) վերնագրուած ալբաներէն գրուած նրա առաջին գրքի երկրորդ հատորը՝ «Աշխարհի Փրկիչ Յիսուս Քրիստոսի Կեանքը»։ Այն ընդգրկում է Հին Կտակարանի Դանիէլի Գրքի Թ.24-26 հատուածների լատիներէն, յունարէն, հայերէն, ասորերէն, եբրայերէն, արաբերէն, իտալերէն եւ ալբաներէն թարգմանութիւնները։

Հայերը եւ ալբանացիները միմեանց ճանաչել են Օսմանեան Կայսրութիւնում, քանի որ Ալբանիան եւս մաս է կազմել այդ կայսրութեան։ Մասնաւորապէս հայահոծ Կոստանդնուպոլսում եղել է ալբանական թաղամաս՝ Առնաուտքէօյը, որտեղ բնակուել են նաեւ քիչ թուով հայեր։ Արեւմտահայերն ալբանացիներին անուանել են առնաուտ/առնաւուտ, ինչպէս՝ թուրքերը. այս արմատն ունի նաեւ հայկական Առնաուտեան/Առնաւուտեան ազգանունը։ Օսմանեան միջավայրում է ծնունդ առել «Ալբանացուն՝ սուրը, հային՝ գրիչը» ասացուածքը[3]։ ԺԸ. դարի հայ հեղինակ Երեմիա Չելեպի Քէօմուրճեանը գրել է «Վասն էքմէքճի Առնաուտ Տիմոյի Ումեմն Որ Սիրեաց Զաղջիկ Մի Հրէի Մրգատայ Անուն» գեղարուեստական երկը, որը ներկայացնում է քրիստոնեայ ալբանացու եւ հրեայ աղջկայ սիրոյ պատմութիւնը։ Այս ստեղծագործութեան մէջ Քէօմուրճեանը բարձրացրել է տարբեր կրօնների պատկանող երիտասարդների միջեւ սիրոյ իրաւունքը եւ հակառակ կրօնական արգելքներին՝ սիրոյ յաղթանակի գաղափարը[4]։

1912ի Նոյեմբերի 26ին Ալբանիան անկախութիւն է հռչակել՝ հինգ դար շարունակ Օսմանեան Կայսրութեան մաս կազմելուց յետոյ։ Այդ կարեւոր իրադարձութեան նախաշէմին եւ դրանից յետոյ էլ, երկրի քաղաքական իրադրութեան վերաբերեալ բազմիցս գրել է հայ, մասնաւորապէս արեւմտահայ մա-

մուլը՝ թարգմանաբար հրատարակելով ինչպէս միջազգային լրատուական գործակալութիւնների տարածած ալբանական լուրեր եւ օտար մամուլում Ալբանիայի մասին լոյս տեսած յօդուածներ, այնպէս էլ տեղ տալով ինքնուրոյն նիւթերի[5]։

Մեր տուեալներով՝ Ալբանիայում առաջին հայերը հաստատուել են Ի. դարի սկզբին։ Նրանք եղել են սուլթանական բանակի ծառայողներ եւ օսմանեան վարչարարներ։ Այնուհետեւ Մեծ Եղեռնի հետեւանքով այս երկիր են հասել հայեր Օսմանեան Կայսրութիւնից եւ հարեւան երկրներից (Յունաստան, Բուլղարիա)։ Սակայն հայ գաղթականների պարբերական մուտքն Ալբանիա սկսուել է 1925ին։ Ալբանացիները, հիւրասէր ժողովուրդ լինելով եւ տեսնելով հայերի լուրջ եւ օգտաշատ գործունէութիւնը, գնահատել են եկուորներին, նրանց չեն ենթարկել ազգային կամ կրօնական խտրականութեան։

1920ականների Ալբանիան՝ Եւրոպայի միակ մեծ մասամբ մահմեդական եւ տնտեսապէս ամենայետամնաց երկիրը, ունեցել է Խորհրդային Հայաստանի չափ տարածք՝ 28.7 հազար քառակուսի կիլոմետր, 800 հազար բնակչութեամբ։ Տարիներ անց Ալբանիա այցելած հայաստանցի պարուհի Անժելա Շահնազարեանը վկայել է. «Գեղեցիկ է Ալբանիան, գեղեցիկ ու այնքան նման մեր Հայաստանին։ Ձորերն աննման Լօռին են յիշեցնում։ Երբ մտաբերում եմ Կորչայի լճափով անցնող ճանապարհը, կարծես թէ երէկ Բայազէտից վերադարձած լինեմ։ Այդ լիճն էլ մեր Սեւանի նման բարձր լեռների վրայ է ընկած, բայց աւելի փոքր է։ Մենք չլողացանք այնտեղ, բայց կերանք լճից բերուած ձուկը, որը նոյն իշխանն էր։ Զարմանալի է, չէ՞։ Իսկ մեզ թւում էր, թէ Հայաստանից բացի ոչ մի երկիր իշխան ունենալ չի կարող... Մեր այս երկու երկրների արտակարգ նմանութեամբ պէտք է բացատրել, որ Ալբանիայի հայերը, թէեւ կարօտով երազում են իրենց հայրենիքը, բայց միեւնոյն ժամանակ մխիթարւում՝ Հայաստանի նմանութիւն այնտեղ գտնելով»[6]։ Իսկ 1958ին ալբանական Բաշկիմի թերթը գրել է. «Ընդհանուր շատ բան կայ մեր [եւ հայերի] մէջ. եւ՛ պայքարը, եւ՛ սովորոյթները, եւ՛ օրէնքները։ Մեր երգերն ու պարերն էլ ունեն ընդհանուր կողմեր»[7]։

Աշխարհագրական նմանութիւններից բացի պէտք է յիշել նաեւ, որ հայոց լեզուի պէս ալբաներէնը եւս առանձին ճիւղ է հնդեւրոպական լեզուաընտանիքում։

Ալբանական հասարակութեան մէջ, ինչպէս եւ հայկականում, շատ ուժեղ են ընտանեկան կապերը. երկու ժողովուրդներն էլ ունեն աշխարհացրիւ սփիւռք, որը հետեւողականօրէն օգնում է հայրենիքին։ Յատկանշական է նաեւ, որ ալբանացիների մէջ տարածուած երաժշտական գործիք է հայկական դուդուկը։

Ահա այս երկրում հաստատուած մի հայ 1925ին թղթակցութիւն է ուղարկել հայ մամուլին՝ տեղեկութիւններ տալով Ալբանիայի ժողովրդի եւ տեղի պայմանների մասին։ Ըստ այդ թղթակցութեան՝ Ալբանիայի կառավարութիւնը մինչ այդ սեփական դրամ եւ տնտեսական քաղաքականութիւն չունի, ամէն քաղաք ունի իր նախընտրած դրամը։ Առեւտրականները եւ արհեստաւորները քրիստոնեաներ են, իսկ հողագործները՝ մահմեդականներ։ Երկրի հարստութեան աղբիւրների օգուտները վայելում են հարուստ կալուածատէրերը, իսկ

ժողովուրդն աղքատ է։ Նոյն այս թղթակիցը նշել է նաեւ, որ ժողովուրդը մեծ մասամբ ծոյլ է եւ նախաձեռնութեան ոգուց զուրկ, իսկ տնտեսութիւնը խիստ նախնական է։ Նա տեղեկացրել է, որ երկրում շատ աշխատանք չկայ, այդ պատճառով պետութիւնը հրահանգել է օտարականների հանդէպ թոյլատու չլինել։ Կառավարութիւնը խոչընդոտում է այնտեղ հաստատուել ցանկացող հայերին, մինչդեռ տարիներ առաջ Ալբանիայի ղեկավարութիւնը ցանկութիւն է ունեցել ընդունել հայ շերամաբոյծներ, գորգագործներ եւ արհեստաւորներ, իսկ հայ հողագործներին՝ պետական հող տրամադրել։ Բուն ալբանացի ժողովուրդը համակրանքով է վերաբերուում հայերին[8]։ Արդէն 1927ի տուեալով՝ «Ալպանիոյ մեծ քաղաքներու մէջ կը գտնուին բաւական թուով հայ արհեստաւորներ, ինչպէս նաեւ քանի մը ազատ արուեստի մարդիկ, մասնաւոր համակրանք կը վայելեն մեր հայրենակիցները եւ դժգոհ չեն իրենց վիճակէն»[9]։ Ալբանական կառավարութեան ժընեւի ներկայացուցիչը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատուիրակին յայտնել է, որ Ալբանիայի կառավարութիւնը պատրաստ է ընդունել քանի չափ հայ շերամաբոյծ ընտանիքներ, որոնց ամէն դիւրութիւն կ՚ընձեռուի։ Հայ Ազգային Պատուիրակութեան անդամ Տիգրան Բաշալեանն ալբանացի պատուիրակին խորհուրդ է տուել այդ հարցով դիմել Աթէնքի հայոց առաջնորդին։ Հայ Ազգային Պատուիրակութիւնը հաստատել է, որ 50ի չափ հայ արհեստաւորներ արդէն բնակւում են Ալբանիայում, բոլորն էլ բարեկեցիկ վիճակում[10]։

Ալբանիայի Վլէօրա քաղաքից 1930ին հայ մամուլին ուղարկուած մի թղթակցութեան մէջ յիշւում է Ալբանիայի հայութեան թիւը. Տիրանա՝ 6 ընտանիք (բժիշկ, դեղագործ, պանդոկապետ, սրճարանատէր, երկաթագործ եւ դերձակ), Վլէօրա՝ 5 ընտանիք (բժիշկ, ատամնաբոյժ, աղիքի եւ սուրճի վաճառական), Դուրացցօ (Դուրէս)՝ 5 ընտանիք (երկուսը օսմանեան տարիներին զինուորական կոչումով մեկնել են եւ հաստատուել այնտեղ՝ ամուսնանալով ալբանուհիների հետ), Շկոդրա (Շկոդէր)՝ 2 ընտանիք (մին՝ կաթոլիկ երկրաչափ, միւսը՝ աղիքի մշակման գործարանի տէր), Գորչա (Կորչա)՝ աքչեհիրցիներ (նոյնպէս զբաղւում են աղիքի մշակութեամբ), Կինոգասթրօ (պէտք է լինի Գիրոկաստրա)՝ մէկ ընտանիք (գորգի վաճառական), Լիւշնէա՝ մէկ ընտանիք (երկրագործական վարժարանի շերամաբուծութեան ուսուցիչ)։ Դուրէսում հայերին է պատկանել մեծ եւ շքեղ «Բոն Մարշէ» վաճառատունը։ Ալբանահայերի ընտանեկան լեզուն հայերէնն է եւ երեխաներին հայկական դաստիարակութիւն են տալիս։ Ընդհանրապէս նիւթապէս լաւ վիճակում են եւ օգնում են կարիքաւոր հայրենակիցներին[11]։ Թէեւ չեն ունեցել եկեղեցի, վարժարան, ակումբ կամ կազմակերպութիւն՝ միմեանց կապուած են եղել ազգասիրական բարեկամութեամբ

1932ին Ալբանիայի ութ գլխաւոր քաղաքների առեւտրական հաստատութիւնների տնօրէն Արամ Կիւլպենկեանը, այցելելով Ստամբուլ, տեղի Արեւելք օրաթերթին հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդել ալբանահայութեան մասին. «Հայերը լաւ անուն հանած են Ալպանիոյ մէջ եւ մեծ քաջալերութիւն կը գտնեն կառավարութեան կողմէ իբրեւ պարկեշտ եւ աշխատասէր մարդիկ»[12]։ Ութ քաղաքներում մորթու եւ աղիքի մշակման ողջ գործը հայերի ձեռքին է եղել. կեսարացի 5-6 ընտանիք աղիքի գործում մենաշնորհ են ունեցել եւ զբաղուել դրա արտածմամբ։ Ամենահարուստ վաճառականներն են եղել Պոտիկեան

եւ Պալճեան եղբայրները։ Դուրացցոյում բնակուող Հայկ Պալճեանը 1930ականներին բաժանորդագրուել է Փարիզի Զուարթնոց ամսագրին եւ տարեգրքին[13]։ Տիրանայում յայտնի է եղել մի ատամնաբոյժ։ Մնունդով պիլեճիքցի Զենոբ Մկրտիչեանը հիմք է դրել լիմոնադի արտադրութեան Ալբանիայում եւ տարածել երկրով մէկ, այնուհետեւ յատուկ մեքենաներով սկսել պաղպաղակի եւ այլ անուշեղէնների արտադրութիւն։ Եաղհանէճեան եղբայրներին է պատկանել հրուշակի արտադրութեան մենաշնորհը։ Արքունի ընտանիքի հայթայթիչը եւս հայ է եղել՝ Պարոյր Կիւլմէզեանը։ Ալբանահայերը եկեղեցի եւ դպրոց չունենալու պատճառով յաճախել են յունական եկեղեցի։ Հարուստներն իրենց զաւակներին ուղարկել են Ցունաստանի հայկական դպրոցները կամ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան Վարժարանը[14]։

Նոյն 1932ին Փարիզի Ցառաջ օրաթերթի սեփական թղթակիցը Ալբանիայից տեղեկացրել է, որ երկրի մտաւորականութեան եւ պաշտօնեաների մեծ մասը բարեկամ է հայ ժողովրդին։ Նրանց մի մասը կրթութիւն է ստացել Օսմանեան կայսրութեան դպրոցներում եւ հայ ուսուցիչներ է ունեցել, իսկ Ալբանիայի մտաւորականներից շատերը նոյնպէս պաշտօնավարել են Օսմանեան շրջանում եւ առիթ են ունեցել մօտիկից ճանաչել հայ ժողովրդին եւ գնահատել նրա կարողութիւնները։ Ցառաջի թղթակցի վկայութեամբ՝ Ալբանիայի տարբեր շրջաններում բնակւում են 100ից աւելի հայեր. բոլորն էլ ինքնաբաւ են, ոմանք՝ լաւ դիրքի հասած։ Նա յիշել է հայ ատամնաբուժների. Վլէօրայից՝ Մանուէլ Աստուրեանին եւ Պէրպէրեանին, Լիսքովիքից՝ Երուանդ Հեքիմեանին եւ Տիրանայից՝ Հ. Պուրնազեանին[15]։ Ի դէպ, ատամնաբոյժ Պէրպէրեանի որդին 1932ին աւարտել է Ալբանիայի Սպայից Վարժարանը, եւ այդպիսով ալբանական բանակի շարքերում եղել է մի հայորդի սպայ[16]։ Մէկ տարի անց, 1933ին, ալբանաբնակ մի հայ երիտասարդ այցելել է Ստամբուլ եւ ժամանակ թերթին տեղեկութիւններ է տուել Ալբանիայի հայերի մասին՝ յիշելով արքայական ընտանիքի ատամնաբոյժ Մանուէլեանին եւ Դուրէսի մեծագոյն վաճառատան հայ տէրերին, որոնց մասին արդէն յիշատակուեց[17]։

1935ի տուեալով Ալբանիայում բնակւել են 120 հայեր՝ ցրուած տարբեր քաղաքներում։ Նրանց պատկանել են աղիքի գործարաններ եւ հիւսուածեղէնի արհեստանոցներ։ Ալբանացիները եւ մասնաւորապէս պետական պաշտօնեաները շարունակել են մեծ համակրանք տածել հայերի հանդէպ[18]։

1930ականներին Ալբանիայում որոշ անուն է ունեցել բժիշկ Մոգին (Երմոգինէ) Փոթուրլեանը։ Նա ծնուել է Թուրքիայի Զոռլու գիւղաքաղաքում, եղել իշխան Ճելիլի անձնական բժիշկը։ Որոշ շրջան բնակուել է Կոնիա-Էրէյլիում, եղել քաղաքապետարանի բժիշկը։ 1915ին խնամել է աքսորի ճանապարհին այնտեղ իջեւանած Գրիգոր Զօհրապին։ 1918ին Փոթուրլեանը հաստատուել է Տիրանայում, յետագայում դարձել 1928ին իրեն Ալբանիայի թագաւոր հռչակած արկածախնդիր Ահմէթ Զոգուի (յայտնի որպէս Զոգու Ա.) եւ նրա ընտանիքի անձնական բժիշկը։ Արժանացել է նաեւ արքայական թիկնապահ գնդի գնդապետի աստիճանի։ 1938ին Զոգու Ա.ն Երմոգինէ Փոթուրլեանին եւ ատամնաբոյժ Ցակոբ Մարգարեանին պարգեւատրել է Սկանդէրբէգի շքանշանով՝ ի նշանաւորումն իր թագաւորութեան տասնամեակի։ Երկու հայ բժիշկներն էլ բարձր են գնահատուել ալբան ժողովրդից, յատկապէս Փոթուրլեանը, որին թագաւորը

տարբեր առիթներով արտայայտել է իր անձնական երախտագիտութիւնը եւ գնահատանքը՝ մատուցած անգնահատելի ծառայութիւնների համար[19]։

1930ականներին Տիրանայում է ապրել նաեւ զմիւռնիացի Ցարութիւն Ցակոբեանը (յայտնի Սարհատ անունով)։ Պատանի հասակից եղել է Հայ Ցեղափոխական Դաշնակցութեան անդամ, 1890ականներից մասնակցել կուսակցական գործերի, Ցունաստանից Զմիւռնիա, Պոլիս եւ Կովկաս փոխադրել զինամթերք։ Պոլսի հայաթափումից յետոյ տեղափոխուել է նախ Ցունաստան, ապա հաստատուել է Ալբանիայում[20]։ Այստեղ ունեցել է մի փոքր կալուածք։ Մահացել է 1941ին։

Երբ 1943ին Ալբանիան բռնազաւթել են նացիստական զօրքերը, տեղի հայերը մասնակցել են նրանց դէմ ծաւալուած պայքարին, օժանդակել պարտիզանական շարժմանը։ Ոմանք գերեվարուել են համակենտրոնացման ճամբարներ, շատերը՝ զոհուել։ Ինչպէս վկայել է տարիներ անց Ալբանիայում հիւրընկալուած վերոյիշեալ հայ արուեստագիտուհին՝ «Ապրելով Ալբանիայում, այդ սակաւաթիւ հայերը անմասն չեն մնում ալբանական ժողովրդի կեանքից... Թանգարանում մենք ծանօթացանք այն հերոս հայերի անուններին, որ պատերազմի ժամանակ եղբայրաբար պաշտպանել էին Ալբանիան եւ զոհուել պատուով»[21]։ Վերոյիշեալ ատամնաբոյժ Մանուէլ Աստուրեանը զոհուել է երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, Գերմանիայում՝ տխրահռչակ Մաութհաուզէնի համակենտրոնացման ճամբարի շինարարութեան ժամանակ[22]։ Ալբանիայի նացիստական գրաւման ժամանակ զոհուել են ուրիշ ալբանահայեր եւս, իսկ ազատագրման պայքարում՝ մի քանի հայաստանցի մարտիկներ։

1946ին Ալբանիան հռչակուել է ժողովրդական հանրապետութիւն։ Երկրի նորընտիր ղեկավարը՝ բռնատէր Էնվէր Խոջան, որը յիսուն տարի երկիրը մեկուսացրել է աշխարհից, սեւեռուն նպատակ է դարձրել ամբողջովին ալբանացնել երկիրը։ Խոջան անձամբ անձնական լաւ յարաբերութիւններ է ունեցել հայ համայնքի որոշ անձանց հետ (օրինակ, նրա անձնական ատամնաբոյժն է եղել Աստուրեանը՝ վերոյիշեալ ատամնաբոյժ Մանուէլ Աստուրեանի որդին եւ Էմիլ Աստուրեանի հայրը[23])։ Հայերին թոյլ է տրուել պահել իրենց ազգանունները, սակայն արգելուել է ամէն տեսակի եկեղեցական արարողութիւն, իսկ գաղտնի ոստիկանութիւնը տներից բռնազաւթել է հայերէն գրքերը[24]։

Միւս կողմից 1950-ականներին սկիզբ առաւ խորհրդա-ալբանական մշակութային փոխայցելութիւնների մի կարճ շրջան, եւ Խորհրդային Հայաստանը ներգրաւուեց այդ խորհրդա-ալբանական բարեկամութեան «պարտադիր ծրագրի» մէջ։

«Եղբայրական» հռչակուած երկիր սկսել են այցելել խորհրդահայ արուեստագէտներ։ 1953ին Երեւանի Ճարտարապետների Տանը բացուել է Ալբանիայի տնտեսութեան զարգացմանը նուիրուած յատուկ ցուցահանդէս, ներկայացուել է 250ից աւելի ցուցանմուշ կրթութեան, արուեստի, գրականութեան վերաբերեալ[25]։ Ռուս շարժանկարիչ Սերգէյ Եուտկեւիչի, խորհրդա-ալբանական արտադրութեան «Ալբանիայի Մեծ Զօրավար Սկանդէրբէգը» պատմական շարժանկարի (1954) գլխաւոր դերերից մէկը կատարել է հայ բեմի մեծ դերասան Վահրամ Փափազեանը։ 1956ին Երեւան է այցելել ալբանական պատուիրակու-

թիւն եւ Հայաստանում ուսումնասիրել է կրթական աշխատանքի մեթոդները[26]։ Նոյն թուականի աշնանը ալբանացի ֆուտբոլիստներ ժամանել են Երեւան, որոնց օդակայանում դիմաւորել են «Բարի գալուստ թանկագին հիւրերին» հայերէն եւ ալբաներէն մակագրութեամբ պաստառներով։ Սեպտեմբերի 23ին Երեւանի «Սպարտակ» ֆուտբոլի խմբի հետ տեղի է ունեցել հանդիպում[27]։ 1957ի Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներին Ալբանիայում հիւրընկալուել է Հայաստանի Երգի-Պարի Պետական Համոյթը, որը տարբեր բնակավայրերում տուել է 40ից աւելի համերգ՝ արժանանալով ալբանական մամուլի ջերմ գնահատանքին[28]։ Նոյն 1957ին Երեւանում լոյս է տեսել ալբանացի բանաստեղծ Անդոն Զակօ-Զայուպիի բանաստեղծութիւնների ժողովածուն՝ թարգմանուած ռուսերէնից[29]։ Նոյն տարին Ալբանիա է այցելել նկարիչ Գրիգոր Խանջեանը, որն ստեղծել է ալբանական բնանկարների եւ դիմանկարների մի շարք՝ «Սկանդէրբէգի Հրապարակը Տիրանայում», «Շուկայ. Ալբանիա», «Լին Գիւղը», «Երիտասարդ Մայր», «Աղջկայ Դիմանկար», «Հանգիստ», «Ալբանական Դիմանկար»[30]։ 1958ին Հայաստան են այցելել ալբանական մշակոյթի գործիչներ, որոնց թւում՝ Տիրանայի Դրամատիկական Թատրոնի անուանի դերասան Զոկա Պետէրը։ Նա հանդիպումներ է ունեցել հայ արուեստագէտների հետ[31]։ 1958ին են կայացել նաեւ դաշնակահարուհի Արեւիկ Աւդալբէկեանի եւ ջութակահար Յակոբ Վարդանեանի հիւրախաղերն Ալբանիայում, որոնք արժանացել են ալբանական Գունա պարբերականի դրուատիքին[32]։

Ինչպէս տեսնում ենք, բոլոր այս իրողութիւնները վերաբերում են 1950ականներին։ Ալբանա-խորհրդային այս հատուկենտ կապերը շարունակուել են մինչեւ 1968, երբ Ալբանիայի իշխանութիւնները դադարեցրել են երկրի անդամութիւնը Վարշաւայի Ուխտին, խզել ամէն կարգի յարաբերութիւն Խորհրդային Միութեան հետ եւ մեկուսացրել երկիրը ամբողջ աշխարհից։

1990ին Հայաստանի անկախութեան հռչակումով եւ Արեւելեան Եւրոպայում Վարշաւայի Ուխտի մարումով, Ալբանիայի հայերն ազգային զարթօնք են ապրել՝ ազատուելով, ինչպէս ալբանահայ գործիչն է բնորոշել, «յիսնամեայ բռնաբարական կոզիացումից»[33] եւ քայլեր առել կազմակերպուելու իբրեւ համայնք։ 1991ի Մարտի 17ին Տիրանայի հայերը համախմբուել են «Ալբանիայի Հայեր» մշակութային միութեան շուրջ, որի ղեկավար է ընտրուել Յարութիւն Եաղհանէճեանը, քարտուղար՝ նեարդավիրաբոյժ, Տիրանայի Համալսարանի դասախօս Էմիլ Աստուրեանը (ծն. 1956ին)։ Այդպիսով, առաջին անգամ յիսուն տարուայ ընթացքում ալբանահայերը միաւորուել են ազգային կառոյցի շուրջ։ Էմիլ Աստուրեանը հայ մամուլին տեղեկացրել է, որ նոյն թուականի Ապրիլի 21ին մի ալբանացի կաթոլիկ քահանայ պատարագ է մատուցել Վարդանանց հերոսների, 1915ի նահատակների եւ Ալբանիայի հայերի ննջեցեալների յիշատակին։ Նոյն տարում Միութեան մասնաճիւղ է հիմնադրուել Դուրէսում[34]։ «Ալբանիայի Հայեր» միութիւնը կապեր է հաստատել Յունաստանի, Իտալիայի, Լիբանանի հայկական միութիւնների, Լիսաբոնի Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան եւ Փարիզի Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդարանի հետ։ 1990-91ին Ալբանիայի հայերը սերտ կապեր են հաստատել Սալոնիկի ակտիւ հայ համայնքի հետ՝ վերջինից ստանալով ազգային կրթութեան վերաբերեալ նիւթեր։

1990ականների տուեալով՝ Ալբանիայի շուրջ 200 հայերի մի մասը զտարիւն հայեր են, մնացեալը՝ ալբանախառն հայեր (ամուսնացած առաւելապէս ուղղափառ, քան կաթոլիկ կամ մահմեդական ալբանացիների հետ)։ Նրանց ազգանուններն են՝ Աբոյեան, Աստուրեան, Եաղհանէճեան, Զաքարեան, Էսքիճեան, Կիւզէլեան, Հալէպլեան, Մարգարեան, Միրզայեան, Մեսճեան, Շահնայեան, Զաքմաքճեան, Պալճեան, Պատէեան, Պուրնուզեան, Փափազեան, Փիրալեան, Փոթուրլեան, Գնաճեան[35]։ Ըստ ՀՀ Արտաքին Գործերի նախարարութեան 2002ի հրապարակման՝ Ալբանիայում բնակւում է 500 հայ[36], ներառեալ՝ սակաւաթիւ Հայաստանից արտագաղթածներ։ Մեծ մասն ունի բարձրագոյն կրթութիւն եւ աչքի են ընկել յատկապէս իրաւաբանական եւ բժշկական ոլորտներում։

Իրականութեանն աւելի մօտ են թւում Վիքերսի եւ Փեթիֆէրի նշած տուեալները։ Նրանք նշել են, որ Ալբանիայում հայերը հաստատուել են Յեղասպանութիւնից յետոյ, հիմնականում Տիրանայում, Դուրէսում եւ Վլէօրայում, այնուհետեւ այստեղ են եկել խորհրդային բանակի հայ զինուորականներ իրենց ընտանիքներով։ Ներկայ դրութեամբ նրանց թիւը մօտ 800 է՝ Տիրանայում եւ Վլէօրայում[37]։

Ալբանահայ նոր սերունդների մօտ հայոց լեզուի կատարեալ չիմացութիւն է եղել, բացառութեամբ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնում ուսանած մի քանի ալբանահայ երիտասարդների։ (Անգամ նրանք բաւական հեռացել են հայութիւնից, ինչպէս՝ Աւնի Դրասա Էսքիճեանը, որի հետ հաստատել ենք նամակագրութիւն)։ 1992ին Յարութիւն Եաղհանէճեանը Տիրանայում կազմակերպել է հայոց լեզուի երկսեռ դասարան։ Նա կոչ է արել սփիւռքահայ միութիւններին սատար կանգնել ալբանահայ նոր սերնդի կրթական կարիքներին՝ նրանց վերջնական ձուլումից հեռու պահելու նպատակով։

1993ի Յուլիսին Ալբանիայի հայերին այցելել են Գիւտ արքեպիսկոպոս Նագգաշեանը Փարիզից՝ Տ. Ժիրայր Յայրագոյն վարդապետ Թաշճեանի ընկերակցութեամբ։ Ալբանահայերի մեծ մասը չէր տեսել ո՛չ հայ քահանայ, ո՛չ հայ եկեղեցական արարողութիւն։ Տեղացի ալբանացի կաթոլիկ մի քահանայ իր համերաշխութիւնն է ցոյց տուել հայ հոգեւորականներին՝ երկու անգամ նրանց տրամադրելով իր եկեղեցին։ Մատուցուել է հայկական պատարագ, ալբանահայ փոքրիկները մկրտուել եւ օծուել են[38]։

1990ականների սկզբին երկրում տիրող ընկերային-տնտեսական դժուարութիւնների պատճառով սկիզբ է առել Ալբանիայի բնակչութեան զանգուածային արտագաղթը տարբեր երկրներ, հիմնականում՝ Արեւմտեան Եւրոպա։ 1993-1995ին Ալբանիայի հայ համայնքի անդամներից շատերն արտագաղթել են, ոմանք՝ վերադառնալու պայմանով[39]։

Յիշենք մի քանի աչքի ընկած ալբանահայերի։

Ալբանիայի Հեղինակային Իրաւունքների եւ Յարակից Հարցերի Ընկերակցութեան նախագահն է երգահան Հայկ Զաքարեանը (ծն. 8.05.1951)։ Միջնակարգ կրթութիւնն ստացել է ծննդավայրում, յաճախել դաշնամուրի եւ այլ երաժշտական գործիքների դասընթացների։ 1969-1974ին երաժշտական յօրինում է ուսանել Տիրանայի Արուեստի Ակադեմիայում։ Զաքարեանը նախ աշխատել է սիրողական երաժշտախմբերի հետ, ապա դարձել Դուրէսի «Մույօ Ուլքինակու» արուեստի դպրոցի դասախօս՝ մի քանի տարի ղեկավարելով այդ

դպրոցի երաժշտութեան տեսութեան եւ յօրինման բաժինը։ Ստեղծագործում է գրեթէ բոլոր երաժշտական սեռերով[40]։ Զաքարեանը յայտնի է առաւելապէս կինօերաժշտութեամբ։ Նա երաժշտութիւն է գրել 27 տեղական շարժանկարների համար, ինչպէս՝ բեմադրիչներ Սամիր Կումբարոյի «Ըստ Օրէնքի» (1976), Մարկ Տոպալլայի «Ամուսնութեան Զայնը» (1978), Գեզիմ Էրեբարէի «Գիշեր Առանց Լոյս» (1981), Դիմիտէր Անագնոստիի «Եղբայրներ եւ Ընկերներ» (1982), Կուլտիմ Եասկուի «Ընկերները» (1982), «Ջերմ Ջեռք» (1983) եւ «Որսորդական Ցանցանք» (1987), Կրիստակ Միտրոյի եւ Իբրահիմ Մուլյայի «Լաւ Մարդը» (1982), Քսանիֆեսէ Կեկոյի «Տաուլանտին Քոյր է Փնտռում» (1984), Նեժատի Տաֆայի «Դու Զպիտի Լռես» (1985), Ֆեհմի Հոսհաֆիի «Ցանուն Ազատութեան» (1987) եւն.։ Զաքարեանը եղել է նաեւ «Ալբանա-Հայկական Բարեկամութիւն» Ընկերակցութեան նախագահը։

Ալբանական մի քանի շարժապատկերներում գլխաւոր դերերով հանդէս է եկել հայուհի Անիսա Մարգարեանը (հաւանաբար վերոյիշեալ ատամնաբոյժ Ցակոբ Մարգարեանի գերդաստանից)։ Նա ծնուել է 1961ին, Տիրանայում, աւարտել է Տիրանայի Համալսարանի Բժշկութեան Բաժինը։ 1978ին գլխաւոր դեր է ստացել ալբանացի կինօբեմադրիչ Գեզիմ Էրեբարէի «Կարմիր Ժապաւէններով Աղջիկները» (1978) շարժանկարում, ապա նաեւ՝ Վիկտոր Գյիկայի «Տարին Շուրջբոլոր» (1980), «Գարունը Միայնակ Չի Գալիս» (1988), Պիրօ Միլկանիի «Մերութեան Գոյները» (1990) շարժանկարներում։ Անիսա Մարգարեանը նաեւ վերջին կինոնկարի բեմադրի հեղինակն է։ Յետագայում հաստատուել է Փարիզում, որտեղ նկարահանուել է Լիրի Բեգէյի «Բարբարոսներից Հեռու» ֆիլմում։

Տիրանայում գործող DIDACT ALBA կրթութեանն օժանդակող ընկերութեան նախագահն է Ժիրայր Յովասար Զաքմաքճեանը (ծն. 1970), գլխաւոր տնօրէնը՝ Տիրան Զաքմաքճեանը։

Հայ-ալբանական հատուկենտ կապերը շարունակւում են՝ հիմնականում մշակոյթի բնագաւառում, տարածաշրջանային համագործակցութեան ոլորտում։ 1999ին Տիրանայում կայացած արուեստաբուժութեանը նուիրուած միջազգային սեմինարին մասնակցել են նաեւ երեք հայաստանցիներ՝ դերասան Լեոնա Իւանեանը, բեմադրիչ Ցասմիկ Խաչերեանը եւ երաժշտագէտ Լիլիթ Սիմոնեանը։ 2001ին Երեւանում կայացած «Փոքրիկ, Փոքրիկ, Փոքրիկ» միջտարածքային թատերական փառատօնին մասնակցել են նաեւ դերասաններ Ալբանիայից՝ ներկայացնելով «Մեդալի Երկու Երեսը» բեմադրութիւնը, որ շօշափում էր քաղաքական թեմաներ[41]։

Այսպիսով, ի դէմս ալբանաբնակ սակաւաթիւ հայութեան՝ Եւրոպայի հայ համայնքների խճանկարն ունենում է եւս մէկ գոյն, յար եւ նման այլ փոքր երկրների հայագաղութներին։ Կազմաւորում Մեծ Եղեռնի հետեւանքով, արագ ուծացում ազգային միաւորուած կեանքի բացակայութեան եւ խառն ամուսնութիւնների հետեւանքով, ազգային որոշակի զարթօնք, հատուկենտ աչքի ընկնող ներկայացուցիչներ տարբեր ոլորտներում։ Ինչ վերաբերւում է Հայաստանի եւ Ալբանիայի միջեւ կապերին, ապա դրանք, ինչպիսին էլ որ լինեն, ի սկզբանէ դատապարտուած են ունենալու պարագայական, եւ շարունակելիութիւն չենթադրող բնոյթ՝ առկայ առնչութիւնների սակաւադէպութեան եւ փոխադարձ հետաքրքրութեան ու շահերի գրեթէ բացակայութեան պատճառով։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ցարութիւն Եաղհանէճեան, «Նամականի», *Սփիւռք*, թիւ 13, 1993, էջ 21-24։

[2] Miranda Vickers, James Pettifer, *Albania: from Anarchy to a Balkan Identity*, C. Hurst & Co. Publishers, 1997, էջ 206-207։

[3] James Pettifer, "Back to Life. Doctor Revives Albania's Armenian Community," *Armenian International Magazine*, July 1991, էջ 35։

[4] Տե՛ս՝ Ցասմիկ Սահակեան, «Երեմիա Զելեպի Քէօմուրճեանի Մի Անտիպ Պոէմը», *Բանբեր Մատենադարանի*, 6, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1962, էջ 409-27։

[5] Տե՛ս, օրինակ՝ *Ազատամարտի* Լոնդոնի թղթակից Մ. Բ. Փափազեանի յօդուածները՝ «Ալպանական Դէպքերը եւ Անգլիական Մամուլը», *Ազատամարտ*, 17.20.07.1911, «Ալանական Դէպքերը եւ Անգլիական Կարծիք», նոյն տեղում, 13-26.07.1911 եւն.։

[6] «Տիրանա-Բուդապէշտ-Սոֆիա», *Սովետական Արուեստ*, թիւ 2, 1958, էջ 62։

[7] «Բարեկամները Գրում են», *Սովետական Արուեստ*, թիւ 2, 1958, էջ 66։

[8] «Հայերը Դէպի Ալպանիա», *Մարմարա*, 18.02.1925։

[9] «Հայերը Ալպանիոյ Մէջ», *Ապագայ*, 9.07.1927։

[10] «Հայ Գաղթականներ Ալպանիոյ Մէջ», *Հայրենիք*, 12.09.1928։ Լուրը կրկնուել է նաեւ մի քանի օր անց՝ «Ալպանիա Հայ Շերամապահներ կ՚ուզէ», *Հայրենիք*, 19.09.1928։

[11] «Հայեր Ցիրուցան», *Ցառաջ*, 18.03.1930։

[12] «Հայերը Ալպանիոյ Մէջ», *Հայրենիք*, 22.09.1932։

[13] Տե՛ս՝ «Նամականուի», *Ջուարթնոց*, 1.12.1938։

[14] «Հայերը Ալպանիոյ Մէջ», *Հայրենիք*, 22.09.1932։

[15] Հաւանաբար միեւնոյն անձնաւորութիւնն է դերասան Մանուէլ Մարութեանի յուշերում յիշատակուած ատամնաբոյժ Ցարութիւնը, որը 1926ին բնակուել է Փարիզում, Բէն Ակիբայի դերով մասնակցել Մարութեանի բեմադրած «Ուրիէլ Ակոստա» ներկայացմանը, այնուհետեւ տեղափոխուել է Ալբանիա (Մանուէլ Մարութեան, Ի՞նչ է Պատահում Բեմի Վրայ, Բեմի Եռեւ Եւ Բեմից Դուրս, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Հայ Տիպ Քոմփիւկրաֆ, 1986, էջ 131)։

[16] «Ալպանիոյ Հայ Գաղութը», *Ցառաջ*, 15.04.1932։

[17] «Ալբանիոյ Հայերը», *Հայրենիք*, 16.11.1933։

[18] «Ալպանիոյ Հայերը», *Ալիք*, 6.06.1935։

[19] «Զոկու Թագաւորին Պալատին Մէջ», *Արագ*, 3.10.1937. նաեւ՝ Albania Honors Court Physicians, *Hairenik Weekly*, 30.09.1938։

[20] Նրա մասին տե՛ս՝ «Սարհատ Մեռած», *Հայրենիք*, 11.07.1930։ «Սարհատ Ողջ է», անդ, 29.07.1930։ «Սարհատ կը Հերքէ Իր Մահը», անդ, 22.08.1930։

[21] «Տիրանա-Բուդապէշտ-Սոֆիա»։

[22] Տե՛ս՝ նրա թոռան՝ բժիշկ Էմիլ Աստուրեանի վկայութիւնը՝ Pettifer։

[23] Vickers, Pettifer, էջ 206։

[24] Pettifer:

[25] «Ալպանական Ցուցահանդէս Երեւանի Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 30.05.1953, էջ 734։

[26] «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 18.02.1956, էջ 164։

[27] «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 22.12.1956, էջ 1220։

[28] «Տիրանա-Բուդապէշտ-Սոֆիա», էջ 60։ *Հայաստանի Կոչնակը Հայաստանի Երգիպարի Պետական Համոյթի՝ Ալբանիայում տուած համերգների թիւը նշել է 96, ինչը թիւրիմացութիւն կամ վրիպակ է* («Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 23.11.1957, էջ 1124)։

[29] *Անդոն Զակօ-Զայուպի, Բանաստեղծութիւններ, թարգմ. Վահագն Կարենց, Մ. Ցարութիւնեան, Երեւան, Հայպետհրատ*, 1957։

[30] Nonna Stepanyan, Boris Zurabov, *Grigor Khandjyan: Jivopis, Grafika* (*Գրիգոր Խանջեան. գեղանկար, գծանկար*), *Երեւան*, 1987, *էջ* 37-39։

[31] *Ն. Ստեփանեան, «Զոկա Պետէրը Երեւանում», Սովետական Արուեստ, թիւ* 12, 1958, *էջ* 79։

[32] *«Բարեկամները Գրում են»* ։

[33] *Եաղհանէճեան, էջ* 21։

[34] Pettifer:

[35] *Նոյն, էջ* 22։

[36] *Տե՛ս՝ Յովսէփ Խուրշուդեան, «Սփիւռքահայ Գաղթօջախների եւ Համայնքների Կապիտալի, Ինովացիոն-Տեխնոլոգիական եւ Մտաւոր Ներուժի Հաշուառում, Քարտէզագրում եւ Դասակարգում», Հայաստան 2020. Զարգացման եւ Անվտանգութեան Ռազմավարութիւն, Երեւան, Տպ. Տիգրան Մեծ*, 2003, *էջ* 364։

[37] Vickers, Pettifer, *էջ* 206։

[38] *Եաղհանէճեան*։

[39] Vickers, Pettifer, *էջ* 206-207։

[40] http://artistetshqiptare.com/kreu.php?faqe=artist&artID=229

[41] *Արծուի Բախչինեան, «Փոքրիկ, Փոքրիկ, Փոքրիկ.... Միջոտարածքային Թատերական Փառատոն Երեւանում», Օրեր, թ.* 1-4, 2001, *էջ* 35։

ARMENIANS IN ALBANIA AND ARMENIAN-ALBANIAN RELATIONS
(Summary)

ARTSVI BAKHCHINYAN
Artsvi@yahoo.com

The Armenians have had occasional historical and cultural relations with the smallest of the Balkan countries, Albania. In the early 20th century Armenians from the Ottoman Empire settled in Albania. In 1925 groups of Armenian immigrants lived in various cities of Albania. They totalled 120 in 1935. Mostly craftsmen, some of them owned their own small businesses.

The proclamation of Socialist regime in Albania weakened the local Armenian community and reduced its number. After the collapse of Communism Albanian Armenians made some attempts at unification. In 2002 the 500 or so Armenians founded a cultural association in Tirana called "Armenians of Albania". Currently the community includes some figures like the composer Haig Zaharian and film actress Anica Markarian who are renowned in the Albanian contemporary arts.